ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
ՍՑ-ԷՍ-2019/40 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Գաբրիելյանի՝ «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու և «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ին ՍՑ-ԷՍ-2019/40 ընթացակարգով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով մինչև ԵԴ/5054/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը Բողոքներ քննող անձ Էմիլ Սարգսյանին նախաձեռնված ընթացակարգի քննությունը շարունակելն արգելելու վերաբերյալ 27.02.2019թ. կայացված որոշումը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

Կասեցնել ՍՑ-ԷՍ-2019/40 ծածկագրով ընթացակարգի քննությունը՝ մինչև ԵԴ/5054/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ